ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- դեկտեմբերի 2022 թվականի №---Ա
ք. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի մարտի 9-ի №90-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) տվել է համաձայնություն «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող հիմնական միջոցների լուծարումից առաջացած 702,6 տոննա սև մետաղի ջարդոնն (այսուհետ՝ Գույք) աճուրդային եղանակով «ԷԴՄԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վաճառելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Ընկերության և «ԷԴՄԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև Գույքի հանձնման-ընդունման ակտը ստորագրվել (կնքվել) է 2022 թվականի մարտի 21-ին, սակայն դրա և աճուրդի արդյունքների մասին №299-Պ արձանագրության պատճենները Հանձնաժողով են ներկայացվել 2022 թվականի սեպտեմբերի 9-ին (գրություն №6119-2022),

գ) Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը,

դ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 26-րդ կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2022 թվականի հոկտեմբերի 24-ի №ԳԲ/34.1-Մ2-3/3726-2022 գրությամբ,

ե) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, 2022 թվականի նոյեմբերի 7-ի №7139-2022 գրությամբ, փորձելով տառացի մեկնաբանել Կարգի 26-րդ կետով սահմանված պահանջը, հայտնել է, որ սահմանված երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով պետք է ներկայացվեր «ԷԴՄԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված համապատասխան պայմանագրի պատճենը, ինչը չի արվել, քանի որ չուներ վերջինիս հետ կնքված պայմանագիր, Գույքը փոխանցվում էր «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գրությունների հիման վրա, որում հստակ նշվում էր աճուրդի ընթացքում հաղթող ճանաչված մասնակցի անվանումը,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 26-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ համապատասխան փաստաթղթերը ներկայացրել են կետում նշված երկշաբաթյա ժամկետի խախտմամբ: Ինչ վերաբերում է Ընկերության փաստարկներին, ապա դրանք հիմնավորված չեն, քանի որ Կարգի 26-րդ կետով նախատեսված «պայմանագիր» հասկացությունն ունի տարածական մեկնաբանություն՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի իմաստով որոշ գործարքների պարագայում (այդ թվում՝ գույքն աճուրդով վաճառքի դեպքում) պայմանագիր է համարվում նաև գործարքի կողմերի քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն ուղղված՝ վերջիններիս կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը և (կամ) արձանագրությունը: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ Ընկերությունը, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը, վերացրել է թույլ տված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով Կարգի 26-րդ կետով պահանջվող փաստաթղթերը, և այդ խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող

անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն, ինչպես նաև նախկինում նման խախտում Ընկերության կողմից թույլ չի տրվել, որի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Կարգի 26-րդ կետով սահմանված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով 2022 թվականի հոկտեմբերի 24-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2022թ.